

TURBULENT QUESTIONS - ԽՌՈՎԱՀՈՅՉ ՀԱՐՑԵՐ

Posted on June 8, 2023 by Keghart



Category: [Opinions](#)



Vartan Oskanian – [Facebook](#), 1 June 2023

To read in English translated by Arminfo click [here](#).

2018-ի իշխանափոխությունից հետո, երբ ակնհայտ դարձավ, որ արդեն սխալ ընտրություն է կատարվել, հայ ժողովուրդը հայտնվել է չդադարող նվաստացումների շրջափուլում: Թվում էր, թե 44-օրյա պատերազմում ծանր պարտությունը նվաստացման գազաթնակետն էր, բայց պարզվեց, որ չէ, երբ Նիկոլ Փաշինյանը Արցախը հանձնեց Ադրբեյջանին նախ բանավոր և շուտով, անկասկած, կհանձնի գրավոր:

Երեկ նվաստացման ևս մի կաթիլ ավելացավ, երբ Միացյալ Նահանգները ողջունեց Իլիամ Ալիևի՝ Արցախի իշխանություններին ներում շնորհելու «բարի կամքը»:

Ես ուզում եմ՝ մի պահ մենք բոլորս մեզ թափ տանք և հասկանանք, թե դա ինչ է նշանակում: Ուրեմն, աշխարհի ամենակոռումպացված և ավտորիտար ղեկավարը խոստանում է ներում շնորհել իր պատմական հողի վրա սերունդներով (հազարամյակներով) ապրած ժողովրդի ընտրյալներին, այն ժողովրդի, որի նկատմամբ տասնամյակներ կիրառվել են ամենադաժան բռնությունները՝ փորձելով նրանց կտրել իրենց իսկ պատմական հողից, որը երբևիցե չի եղել անկախ Ադրբեյջանի կազմում: Եվ ԱՄՆ-ը ողջունո՞ւմ է այս քայլը:



Պետք չէ մեղադրել Միացյալ Նահանգներին: Այստեղ մի մեղավոր կա. դա Հայաստանի ներկա իշխանություններն են: Այս նվաստացումից դուրս գալու և իրավիճակը կտրուկ փոխելու միակ ճանապարհը ժողովրդական ճնշմամբ այս իշխանություններին հրաժարական պարտադրելն է: Ես կարծում եմ, որ ողջ հայությունն այսօր չունի այլ գերակա խնդիր, քան իր ձայնի բարձրացումն է Հայաստանի իշխանությունների կողմից արվող պատմական այս անարդարությունների դեմ և պահանջը՝ հրաժարվելու Արցախի հանձնման գործընթացից:

ՄԱԿ-ի անդամ 190-ից ավելի երկիր կա, որոնք մտել են այդ կազմակերպություն որոշակի սահմաններով: Ներկայում աշխարհում գոյություն ունի 50-ից ավելի տարածքային վեճ, ինչը նշանակում է, որ գոյություն ունեն առնվազն երկու տասնյակ զույգ-երկրներ, որոնք

տարածքային չկարգավորված խնդիրներ ունեն:

Բացառությամբ մի քանիսի՝ այդ բոլոր զույգ-երկրներն ունեն դիվանագիտական հարաբերություններ, մեծամասամբ՝ նաև բարեկամական նորմալ կապեր:

Այս պահին Նիկոլ Փաշինյանը Քիշնևում է: Չգիտեմ՝ փաստաթուղթ կստորագրի, թե ոչ, բայց բոլորի համար այդ բանակցությունների ելքը վճռված է:

Ես կարծում եմ, որ Հայաստանն այսօր հնարավորություն ունի խուսափել Ադրբեջանի հետ որևէ փաստաթուղթ ստորագրելուց: Դրա համար կան հիմնավոր պատճառներ, ինչը շատ հասկանալի և ընկալելի է բոլորի համար: Եթե Նիկոլ Փաշինյանը, այնուամենայնիվ, ուզում է ինչ-որ փաստաթուղթ ստորագրել, դա պետք է ստորագրի վերապահումով, որը կվերաբերի Լեռնային Ղարաբաղի ապագա կարգավիճակին: Եթե Փաշինյանը ստորագրի այն, ինչի մասին բանավոր ասել է, ապա դա հայ ժողովրդի համար կլինի ամենամեծ նվաստացումը և անդառնալի ազգային ողբերգություն:

TURBULENT QUESTIONS

By **Vartan Oskanian**, [Facebook](#), Former Foreign Minister of Republic of Armenia

ArmlInfo. After the change of power in Armenia in 2018, when it became obvious that the wrong choice had been made, the Armenian people found themselves in a cycle of non-stop humiliation. Former RA Foreign Minister Vartan Oskanian wrote on his Facebook page, commenting on a statement by the US State Department, which welcomes recent statements by Azerbaijani President Ilham Aliyev about discussing the issue of "amnesty" for the authorities of Nagorno-Karabakh.

<It seemed that a heavy defeat in the 44-day war was the height of humiliation, but it turned out that this was not the case when the Prime Minister of the Republic of Armenia Nikol Pashinyan handed over Artsakh to Azerbaijan, first verbally, and soon, no doubt, he will hand it over in writing. Another drop of humiliation was added yesterday, when the United States welcomed Ilham Aliyev's "good will" to pardon the Artsakh authorities," Oskanyan said.

He pointed out the importance of the moment to understand what it means. <The most corrupt and authoritarian leader in the world promises to pardon the elected people who have lived on their historical land for generations and millennia. This land has never been part of independent Azerbaijan, which for decades used the most brutal violence against the people living in Karabakh. And the US welcomes this move? But the United States should not be blamed for this. There is another culprit here – these are the current authorities of Armenia. The only way to get out of this humiliation and radically change the situation is to achieve the resignation of these authorities through national pressure. I believe that the entire Armenian public today has no other priority than to raise their voice against these historical injustices committed by the Armenian authorities and the

demand to abandon the process of transferring Artsakh to Azerbaijan», the ex-minister wrote.

He also pointed to the presence of more than 190 member countries of the UN, which entered the organization with certain boundaries. Currently, there are more than 50 territorial disputes in the world, which means that there are at least two dozen countries with unresolved territorial issues. With the exception of a few of them, all these countries have diplomatic relations, mostly friendly and normal relations. «At the moment, Nikol Pashinyan is in Chisinau. I don't know if he will sign the document or not. I think that today Armenia has a chance to avoid signing any document with Azerbaijan. There are good reasons for this, which are obvious to everyone. However, if Nikol Pashinyan wants to sign any document, he must sign it with a reservation regarding the future status of Nagorno-Karabakh. If Pashinyan signs what he said verbally, it will become an irreversible national tragedy for the Armenian people," Vartan Oskanian said. –

Նիկոլ Փաշինյանի մասնակցությունը Էրդողանի երդման արարողության

Nikol Pashinyan's participation in Erdogan's swearing-in ceremony

Նիկոլ Փաշինյանի մասնակցությունը Էրդողանի երդման արարողությանը Հայաստանում և Սփյուռքում լայն շրջանակների զարմանքն ու զայրույթն է առաջացրել: Ճիշտն ասած՝ ինձ այդ այցը ո՛չ զարմացրեց, ո՛չ էլ զայրացրեց, որովհետև Անկարայում Փաշինյանը ներկայացնում էր ոչ թե հայ ժողովրդին, այլ ինքն իրեն: Նա չէր ներկայացնում անգամ իր սեփական ողջ կուսակցությանը կամ ողջ կառավարությանը, որովհետև ոչ ոք չի կարող ինձ համոզել, որ այնտեղ չկան մարդիկ, որ դեմ չէին լինի նրա մասնակցությանը:

Ես մի կողմ եմ դնելու հարցի զգացական և բարոյական մասը առ այն, թե ինչ արժեքներ տրորելով նա հասավ Անկարա. ցուցակը շատ երկար է: Հարցը կներկայացնեմ միայն քաղաքական ու դիվանագիտական տեսանկյունից:

Այս այցով Փաշինյանը ևս մեկ անգամ ցույց տվեց, որ շատ հեռու է դիվանագիտությունից: Ես հաճախ եմ ասել և չեմ զլանա կրկնել, որ եթե նա դիվանագիտական նվազագույն հմտություն ունենար, նախ կխուսափեինք պատերազմից և այսօր կունենայինք Արցախ՝ ԼՂԻՄ-ի ամբողջական տարածքով, 20 կմ Լաչինի միջանցքով՝ ճանաչված Ադրբեջանի, Թուրքիայի և միջազգային հանրության կողմից, ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի կողմից երաշխավորված միջանկյալ կարգավիճակով, Ադրբեջանի ու Թուրքիայի հետ բաց սահմաններով:

Փաշինյանը չի հասկացել, որ Թուրքիայում երկրաշարժից հետո օգնություն ցուցաբերելով ու Էրդողանի երդման արարողությանը մասնակցելով՝ չի կարող Թուրքիային սիրաշահել հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման հարցում: Թուրքիան իր քայլն անելու է, երբ ինքը նպատակահարմար համարի: Ավելին, հայ-թուրքական սահմանի բացման և դիվանագիտական հարաբերությունների հաստատման բանալին Բաքվում է: Հիմա, երբ Լեռնային Ղարաբաղը հանձնվում է

Բարձրին, և շուտով կբավարարվեն Ադրբեջանի մյուս պայմանները, Թուրքիան բացելու է սահմանը՝ անկախ նրանից՝ այդ այցը կլիներ, թե ոչ:

Այստեղ կա նաև Փաշինյանի արժանապատվության խնդիրը: Երդողանը բառի իսկական և փոխաբերական իմաստով վիրավորել է ոչ միայն հայ ժողովրդին, այլև անձամբ Փաշինյանին: Իր եղբայր Ալիևի հետ Փաշինյանի ու հայերի նկատմամբ նրանց վիրավորանքների համադրումը չէր կարող որևէ մեկի մոտ ցանկություն առաջացնել մասնակցելու արարողության վասն ոչնչի:

Հայաստանի ու Թուրքիայի հարաբերությունները հազիվ թե կարելի է ավելի կարևոր համարել, քան, օրինակ, Ֆրանսիայի ու Հունաստանի հարաբերություններն այդ երկրի հետ: Սակայն ո՛չ Մակրոնը, ո՛չ Միցոտակիսը չմասնակցեցին այդ արարողությանը՝ իմ համոզմամբ՝ նաև այն պատճառով, որ Երդողանն անձնական վիրավորանք է հասցրել նրանց:

Ճիշտը չգնալն էր: Եթե ամբողջ հայ ժողովրդի մեջ կար ընդամենը մի մարդ, որին այս այցը ցավ էր պատճառելու, պետք չէր գնալ, որովհետև չգնալուց ոչինչ չէինք կորցնելու:

Comments



Ashot – 2023-06-29 19:44:30

For the record, Oskanian resigned in 2008. He was out of the picture for 12 years before 2020 war. I can't understand how he could be implicated in this catastrophic failure.



Vahe – 2023-06-29 16:22:46

Whatever schooling Mr Vartan Oskanian has, Nikol Pachinyan does not have. Whatever diplomatic skills Vartan Oskanian possesses but Nikol Pachinyan does not; Vartan Oskanian FAILED as Armenia's FM for 10 years. September 27, 2020 Azeri attack is also a testament of Vartan Oskanian's catastrophic failure. Vahe



Ashot – 2023-06-09 15:11:48

It's easy to talk after the fact. Why didn't Oskanian during his tenure under Kocharian work out a more stable solution for Artsakh instead of leaving matters in limbo?



Harout Bronozian – 2023-06-09 13:34:47

Vartan Oskanian should have known who and what Nikol Pashinyan was. He is five years late to demand Pashinyan's resignation. This article below says a lot about the true pro-Azeri intentions of the US and the West.

<https://www.aei.org/op-eds/secretary-of-state-antony-blinkens-ego-will-cost-armenian-lives/>
Secretary of State Antony Blinken's Ego Will Cost Armenian Lives.



Tavit – 2023-06-09 11:42:31

Principled, patriotic opponents of Pashinyan must unite and see that he does not further ruin the country.